ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 202 – Ա 10 հունիսի 2019 թ.

ՀԱԿՈԲ ՂՈՒԼՈՅԱՆԻՆ, ՄՀԵՐ ԿՅՈՒՐԵՂՅԱՆԻՆ, ԱՐԱ ՀԱՅԿԱԶՅԱՆԻՆ, ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԵՎ ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ Ք. ՍԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ ու 209-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի «Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղման պայմաններն ու կարգը սահմանելու մասին» N 1239-Ն որոշումը

կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի վարիչ Հակոբ Ղուլոյանին, գլխավոր մասնագետներ՝ Մհեր Կյուրեղյանին, Արա Հայկազյանին, Գագիկ Հովհաննիսյանին ու ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Սուրեն Պետրոսյանին 2019 թվականի հունիսի 10-ին, 11-ին և 12-ին գործուղել ք.Սևան՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի Սևանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունում ներքին աուդիտի աշխատանքների շրջանակներում Սևանի տարածաշրջանի համայնքներ այցելելու՝ ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքների բարեկեցության աստիճանը որոշելու համար /առանց գիշերավարձի/:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության

հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:

10.06.2019

ՄԱՐԶՊԵՏ

HOVHANNISYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
Ք.Գավառ